

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԱՆԻՐԷ. Ապրիլի փոփոխություններ

ՄՈՒԳԱԹԻՍՄԻ ձևից դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS

Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ՄԱՆԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՐԵՆՈՒՆԻՈՒՆ

ՄԷԿ անգամի համար տողը 3 ՂՐԶ. ողջ

ՄԷԿ անգամի անկի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱՌԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՊԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան ՂՐԶ. ողջ 100

Վեցամսեայ » 55

Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան ՁՐ. 26

Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԹԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄ

ՈՒՆԻ ԴՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

Լ. ՐԱԳԻՐ

ԱԶԻԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԶԵՐԵՔԵԱԲԹԻ, ՀԻՆԳԵԱԲԹԻ ԵՒ ՇՄԲԱԹ ՕՐԵՐԻ

ՏՃՈՐԷՆ-ԽԱՐԱԳԻՐ Յ. ԱՂՓԻՍԻ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

(ՄԱՍՆԱԽՈՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՓԵՐՈՍԻ)

ԼՈՏՈՑ, 11 ՅՈՒՆԻՍԻՐ 1902

Նախապաշարական տեղ զբաղեցրած է, եթե կուզեք, բայց ամեն պարագայի մէջ չարա- գուշակ սկզբնաւորութիւն մը չեմ ուզեր ընել այս անդրանիկ թղթակցութեան մէջ, ձեզ խօսելով Հարաւային Աֆրիկէի պատերազմին վրայ որ Լոնտոնի խօսակցութեանց և թղթակցութիւններու միակ նիւթն է:

Չեմ պրօքըն կը յամարի և կառավարու- թիւնը կը յարմարի. ահաւասիկ երկու բա- ռով իրաց արդի կացութիւնը, որ ինչպէս գիտէք, վարդապետ չէ. Մամուլը ինչպէս նաև ժողովուրդը հաշտութեան կողմն են, հակառակ բրիտանական ծանօթ ինքնավարու- տուածութեան. սակայն նորէն կառավարու- թիւնը զիջում չընէ և պատերազմը կը շա- րունակուի:

Ընդհանուրին կարծիքը սա է թէ յառա- ջիկայ գարնան թշնամութիւնները պիտի դադ- րին և Էտուար Է. իր թագադրութեան օրը, պատերազմը վերջացած պիտի հրատարակէ:

Ասոր համար է որ այդ հանդիսաւոր թը- ւակներ անհամբերութեամբ կ'սպասուի, թը- ւական մը որ խաղաղութեան և խրախմբանք- ներու կրկին տեսակետով արտասովոր նը- շանակութիւն մը կ'զգենու. և այժմէն իսկ կ'զբաղենք Ալպիոնի գաւակներու միտքը:

Էտուար Է. ի թագադրութիւնը — որուն վրայ խօսել կուզեմ այսօր — տիեզերական événement մը պիտի ըլլայ քանի որ ա- նոր փառաւորութեանը համար աշխարհին չորս ծայրերէն թագաւոր զուլանք, իշխան- ներ, նախարարներ, ազնուականներ, ամեն ցեղէ, ամեն ազգէ, ամեն զոյնէ պիտի գան, պիտի համախմբուին բրիտանական մայրա- քաղաքին մէջ ուր օրերով պիտի տեսն այդ արքայական հանդէսները:

Գաղափար մը տալու համար ձեզի այդ տօններուն կարեւորութեան վրայ, սա չափը ըսեմ թէ անգլիական ազգին համար 4 մի- լիոն ոսկիի պիտի նստի իր վեհապետին թագադրութեան հանդէսը որուն համար հի- մակուց պատրաստութիւններ տեսնուելու վրայ են:

Այդ առասպելական գուտարին մէջէն մի- այն 250,000 անգլիական ոսկի պիտի վատ- նուի համազգեստներու համար գործածուած ոսկի լարերու, սուրբերու, մետաքսեայ գուլ- պաներու, արհեստական բուսերու և շքա- վառքերու համար:

Խիստ աւելի կարեւոր գումար մը, 850 հազար ոսկի պիտի յատկացուի հիւրասի- րելու համար օտար պատուիրակները որոնց մէջ պիտի գտնուին իշխաններ, ցեղապետ- ներ, ազնուականներ և բարձրաստիճան ան- ձնաւորութիւններ: Եւ Անգլիոյ ամեն կողմը տրուելիք հացիբրոյթները, շքանշանները և այս կարգի ուրիշ ծախքերը 700,000 ոսկի պիտի արժեն ազգին:

Թառախիկայ թագադրութեան առթիւ, ա- մենուն միտքը կուգայ անցեալէն յիշատակ- ներ և մանրակերպ որոնք այս պահուս տեսակ մը այժմութիւն կատանան:

Էտուար Է. ի նախնիքներէն ճօրճ Դ. ի համար կ'ըսուի թէ իր թագադրութեան օրը իրեն սեպհական թագ մը չունենալուն հա- մար, ստիպուեցաւ հատ մը վարձու առնել հետեւի պարագաներու մէջ: Այդ միևնոյն թագը որ յատկապէս իրեն համար շինուած էր, նախապէս սահմանուած գինէն շատ ա- լելիի ապրանք եղած ըլլալով գայն շինող գոհարավաճառին, այս վերջինը 1,750,000 ֆրանք պահանջեց թագը յանձնած օրը: Բայց թագաւորը որ թէև կծծի չէր, շատ բարձր գտաւ գոհարավաճառին պահանջը և մերժեց ընդունիլ իր ապագայած թագը, ուր- կէ ծագեցաւ անհամաձայնութիւն մը որ կարելի չեղաւ հարթել մինչև թագադրու- թեան օրը: Եւ որովհետև առանց թագի թագադրութիւն չըլլար, արքունիքը ստիպ- ուեցաւ մէկ օրուան համար 200,000 ֆր. վարձք վճարել հաղիւ ութ անգամ աւելի արժող թագի մը համար:

Ինչ մը ետքը, այդ միևնոյն թագաւորը ուրիշ պատիւ մըն ալ արժանացաւ, պատիւ մը՝ զոր կրկու համար անպատճառ թագա- ւոր ըլլալու հարկ չկայ: Ամուսնացած մար- դերու հանրապետութեան մէջ զօրադադար այդ եղջիւրէ պատկը շատեր կը կրեն և երբեմն այնպիսի համբերատարութեամբ զոր հետեւէն գիտել՝ պարզապէս երանութիւն մըն է մեզի, ամուրիներու համար:

Գալով ճօրճ Դ. ի, այս անդադ թագա- ւորը, ինչպէս կ'ըսէ պատմութիւնը, չարա- չար կը խաբուէր իր կնոջմէն, Բարբալէն տը Պրունսլիք թագուհիէն, որուն սրտին մէջ մէկէ աւելի սէրեր հեշտ դրացնութեամբ մը կ'ապրէին քովէ քով:

Հոս տեղն է ըսել թէ թագաւորները և սովորական մահկանացուները երկու բանի առջև միայն հաւասար են իրարու, մէջ մը արգարութեան առջև, մէջ մըն ալ... եղջիւրէ պատկներու:

Նոյնպէս պատմութիւնը կ'արձանագրէ թէ

ճօրճ Դ. թագաւորին ընտանեկան գորագ- ղութիւնը իբրև թէ բաւական չէր, այն ա- տենւան լորսերու խորհրդարանը, չես զի- տեր ինչու, հակառակ ինկած է թագաւո- րին՝ ապահարզանը մաւերացուցած է ընդ- մէջ ինչպէստիև և Բարբալէն տը Պրունս- վիքի:

Կըսեն թէ նոյն իսկ ժողովուրդը, օրի- նախ վերէն եկած ըլլալուն համար թերևս, «եռհա» ի կը բռնէ եղբր այն ամեն դա- տարները որ այդ այլամբնութեան դա- տին մէջ թագուհիին կողմնակցութիւն մը ցոյց տուած չեն:

Եր պատմութի թէ ատոնցմէ մին օր մը, «Լուստի Պրին» վրայէն անցած պահուս, քիչ է մնացեր որ շուրջ նետին զինքը, ու- ռով՝ խոս համարձակած է եղբր իր շուրջը խոնուած բազմութեան քանի մը խօսք ընել համայնելու համար թէ ամբողջ յանցանքը թալուհույն է. Ժողովուրդը կրակ կտրած «Չուրը նետեցէ՛ք» կը պոտար մէկ կողմէն և աւել կողմէն «Կեցցէ՛ք» Բարբալէն թագու- հին:

Գատաւորը տեսնելով որ բանը բուսած է և ազատելու ճար չկայ, զլիով հաւանու- թեան նշան մը կ'ընէ և կը պաղատի որ թող արուի իրեն երկու բառ արտասանել: Բազմութիւնը կը համակերպի և խորին լը- ութիւն մը կ'սկսի տիրել ամբողջ մէջ: Ազնուական Անգլիացիին կ'ըսէ կը կանգնի կառքին ոտնոյթին վրայ և ամուր ձայնով մը կ'ըսէ.

— Այո՛, բարեկամներս, կեցցէ՛ք, յաւատ կեցցէ՛ք Բարբալէն թագուհին, Աստուած եր- կար կեանք տայ իրեն, ժամանակ տալու համար ձեր կիներուն որ իրենց թագուհին օրինակին կարենան հետեւիլ...

Երկու վայրկեան ետքը ամբողջ կը ցըր- ուի և զատաւորը անվտանգ կ'անցնի կա- մուրջէն:

Ինչպէս կը տեսնուի ներկայ պատմութե- նէս, կիներու այլամբնութիւնը հին հիւան- դութիւն մըն է որուն միջոցով չափաւ գտնուի որքան ատեն որ երկրագունդը թաւալի այս անկը անհունութեան մէջ:

ՃՕՆ ԹԷՆԻՍ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ՓԱՐՈՍ»Ի

Պ. Ն. ԱՂԵՔՍԱՆԴԻՍ. — «Վերջին և Ա- դամի» վերնագրով մեր ֆանթեզիին չէք հասկեր: Ատրիկայ նորոսմիտ և նորոսմալ ընթերցողներու, fin lettre ներու համար ցուած էր, հետեւապէս չենք զարմանար նիթէ ձեզի պէս կրկնելը զայն չեն ըմբռնա- նած: Գուր Սալմուս բազմեցէք:

Թ. Տ Է Մ Ի Ր Ճ Ե Ա Ն

ԱՅՍԱՍՆԱԲԱՅՑ

ԲԵՍԱՄԷԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3 ՕԹԷԼ ՇԷՓԸՐՏՈՒ ԴԵՄՍԸ

Եւրոպական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ահուայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ահուաներու, սանթրիքներու ոսկիէ, աղիւմիսիօմէ, քաւուռէ. Ապահով և տոկոն քոյովալաժ ոսկի, բլաթին, կայն, կայն: Լինտերու հիւանդութեանց զարսնում եւրոպական և ուրիշ միջոցներով:

քաղաքական կարելի դժուարություններից տեսակետով: Ուրեմն գիշարը կը բացարձակապես լինի զեպերը որոնց թափըն եղան վերջերս Գոմէշի ի նաւահանգիստը որ Պարսկային ծոցին մէջ կը գտնուի:

Արդարեւ Մեծն Բրիտանիա իր աւանդական հեռատեսութեամբը՝ արդէն իսկ ապահոված է իր գերակշռութիւնը Պարսկային ծոցին մէջ և հին ժամանակներէ ի վեր տեսակ մը հովանաւորութիւն հաստատած է զրամի ուժով՝ եղբարեակ աբար շէխերուն վրայ որոնք ինչպէս Հօրանի Տիւրքները, Տերսիմի Գիւրաքերը և Հէքքարի Ստորինները՝ Սուլթանի անուանական գերիշխանութեան տակ միայն կը գտնուին: Բայց այս շէխերը իրենց ներքին գերատաճառին կոխկոյնը մշտականօրէն խռովայոյզ վիճակի մը մէջ կը գտնուին և, օգտուելով այս պարագայէն՝ Բ. Գուսը ինչպէս և հնդկական կառավարութիւնը աշխատած են՝ իւրաքանչիւրը իր հաշուոյն զանոնք իրենց ազդեցութեան տակ առնել:

Կը յիշուի որ, զեն վերջերս, երբ Պարսիայի վալին կողմէր թուրք զօրքերը զրկել ի Գոմէշի Մուպարէբին զէմ, Անգլիական մարտանաւերուն հրամանատարը սպաննաց զայն «զըրաւել» կէթ թուրք ուժերը ետ չի քաշուէին:

Նմանապէս, թոյլ չը տրուեցաւ որ ցամաք ելլէ թուրք բարձր պաշտօնատար մը որ Սուլթանին կողմէն հրահանգ ստացած էր համազելու Մուպարէբը որ Պոլսի երթալ իր գերիշխան վեհապետին այցելութեան և այս միջադէպներուն առթիւ էր որ «Թալմիշ»ը, առաջնորդողի մը մէջ համարին մաքրաւէական քաղաքականութեան վերլուծումն ընելով բացէ ի բաց կը յայտարարէր որ եթէ թուրք կառավարութիւնը իր էնթրիկները շարունակէ Պարսից Ծոցին ափերուն վրայ, Բրիտանական կառավարութիւնը այնպիսի միջոցներ ձեռք պիտի առնէ որոնք ապահովապէս շատ ակորփելի չը պիտի թուին ի Սլաւապօլ: Արդ հաւանական է որ Գոմէշի կամ ուրիշ ծովափնայ կարևոր կէտ մը զինուորական զբաւումը անգլիացիներու կողմէն իրենց հետեանք պիտի ունենար Ռուսեր:

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (53)

ԺԸՀԱՆ ՏԻՎՐԷ

ԲՐԷՆԱ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇԱՆՈՒԱԾ ՎԷՊ

ԳԼՈՒԽ ԺԲ.

Երկար ժամանակ անցնելէ վերջը, կը զարմանար զեն թէ ինչպէս կը ցած էր ինքզինքը զայնիւ ոյժը ունենալ. կը զարմանար թէ ինչպէս, նուազիտ, չէր դացած Մուրատի ըզլը, և իր յիմարութեան յոյգքին մէջ՝ չէր աղաղակած անոր երեսին. «Կը սիրեմ ձեզի, փաշա... ես ձերն եմ... սա կինը վնասեցէք»:

Ժերմէն անսլոյով կեցած էր. նոյն իսկ

րուն՝ զբաւումը հանդիպակոյ նաւահանգիստի մը, զորօրինակ չէր տէր Ապպաս կամ Պուշիւր, Պարսկային հողին վրայ և այս պատահականութիւն մըն է որ, —Թեքն— կրնայ casus belli մը ըլլալ կէտին և փղին միջև: Այն ատեն է որ պիտի կատարուէր Լորտ Գըրդընի մարգարէութիւնը զոր ըրած է իր «Պարսկաստան և Պարսկական խնդիր»ը անուն գործին մէջ ըսելով թէ՝ իրանի երկիրը կոչուած ապագային մէջ առաջին դաշտը ըլլալ Բրիտանական և Ռուսական կայսրութեանց միջև զինեալ ընդհարումի մը: Բայց ինչ որ մատանդ կը հետևի այս ամենէն, մեր տեսչականով, սա է որ Եւրոպական շահերուն յառաջտեսական սնունդը թուրքի մէջ անտեսական ալլազան արտօնութեանց ձևին տակ հետըզհետէ աւելի կը շեշտէ քաղաքական մրցակցութեանց որոշօրն ըսպաւնական հանգամանքը աշխարհի խաղաղութեան տեսակետով և թէ հետևաբար Եւրոպայի գերագոյն շահն իսկ կը պահանջէ թուրքի մասին վերջնական կարգադրութեան մը յանգնելու միջոցներուն վրայ խորհել:

Ա. Ճ.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Գեր. Այվազեանի հիւանդութեան վրայ այս առումը մեր ստացած լուրերը նուազ վրդովիչ են քան երբէք:

Հիւանդութիւնը իր կանոնաւոր ընթացքը շարունակելու չըլանին մէջ կը գտնուի:

—Եւրին Գերապատութեան հիւանդութեան հետեանք և ազգային զինանատան ընթացիկ գործերը յապաղումներ չի կրելու համար, Արթ. Տէր Մամբրէ Ա. Գահանայ վարդապետն Առաջնորդական փոխանորդ կարգուած է:

ՀԱՅ ՆԵՄԱՔԸ

Սիրուն անակնկալ մը վայելելու բաղդը ունեցանք այս առումը:

Թեքնիս խմբագրութեանը աշխատած միջոցին յանկարծ զէմերին կանգնած տեսանք... Երուանդ Օսեանը:

Եղիկի բաշութիւնը ունեցած էր պատասխանելու այն ազնիւ խօսքերուն զոր իքզինքն, նկատմամբ կին, ինքզինքը պարտաւոր զգացած էր անոր ուղղելու, երբ միայն իր փոքրիկ կատակերգութիւնը ընցած էր: Գաստարակուհին կը զգար որ իրեն մէջ երկու անձեր գոգցես կը շարժէին. մէկը, շատ անխռով, որ կը խօսէր, կը քաշէր ու կը խորհէր. միւսը, իր վերաւոր հոգեւոր ալքերուն մէջ խորատոյգ, որ կը տուայտեր, կ'ընդլզէր, կը զարմանար աներկոյթ համակերպութեանը վրայ, որ ապշութեան անտարբերութեամբ մը շրթունքները երկրալ և ոտքերն ու ձեռքերը շարժել կուտար:

Պզտիկ հանրմենքն ալ պարտաւորեցան կրել իրենց վաղմիկ սպասուհիին հազար ու մէկ զգաւանքները, հազար ու մէկ գո-

Օտան, «Ազատ Խօսք»ի նրբամիտ խրվապիւրը, «Փարոս»ի վաղմիկ աշխատակիցը և ուրիշ այնքան զեղեցիկ զրուածներու հեղինակը, երէկ գիշեր Գահիրէ հասեր է Բօն Սայիտի ճամբով:

Օտան ժամանակ մը Գահիրէ պիտի մնայ և խոստացաւ այդ միջոցին աշխատակցի մեզի: Մեր ընթերցողներու աչքը լոյս:

ՏԵՂԱԿԱՆ

—Աղքատագրող առողջապահական ժողովը առջին օրուին ի վեր որոշեց որ Եւրոպական նաւահանգիստներու մէջ գործադրութեան դրուի ժանտախտի դէմ կանոնադիրը իշխի արտածութեանց համար ուր զէպք մը պատահած ըլլալը ծանուցուած է:

—Ն. Բ. Խաթիւր ուրբաթի աղօթքը Մաթարիէի միկիթին մէջ կատարեց երէկ:

—Հանրային Պարտուց վարչութեան ժողովը իր վերջին երեքշաբթի օրուան նիստին մէջ որոշեց երեքշաբթի նախարարութեան տալ 670,000 Եգիպտ. ոսկիի գումարն զոր այս վերջին պահանջած էր Վերին Եգիպտոսի ջրամբարներու շինութեան յաւելումական ծախքերուն վճարման համար: Յիշեալ վարչութիւնը որոշեց տալ նաև հանրօգուտ շինութեանց համար խնդրուած բոլոր գումարները:

Վարչութիւնը յետաձգեց իր որոշումը հանգստեան թշակի գնումներու համար ուղուած 200,000 ոսկիի մասին: Եւ Գահիրէի փողոցներուն ափալթով շինուելուն համար պէտք եղած 50,000 ոսկիի տեղ 20,000 ոսկի յատկացուց:

—Խաթիւր զինանագիտական գործակատար Պ. Թուճին իր վերջնականապէս Եւրոպայէն մեկնելուն առթիւ, երէկ և այսօր կ'ընդունի իտալական զաղթականութեան անդամները. հաւանական է որ իր մեկնումը մը ամսոյս 30ին տեղի պիտի ունենայ:

Պ. Թուճին Աղքատագրող պիտի երթայ ուր յառաջիկայ շաբաթ կ'էտրէն վերջը ժամը մէկուկեսին երեքուկէս ընդունելութիւն պիտի կատարէ նմանապէս:

—Ն. Բ. Խաթիւր արտաքին գործոց նախարարութեան նախորդ դիւանապետի օգնական Ալի Ռիզա պէյի Յրդ. կարգի Մէհիթին պատուանշան շնորհեց:

—Ն. Բ. Խաթիւրիին հովանաւորութեան տակ և հիւպատոսական ու զինանագիտական մարմնոյ տիկնանց կողմանէ կազմակերպուած բարեփոխական տօնախմբաւոր տեղի պիտի ունենայ յառաջիկայ փետրուար

ընդի արտայայտութիւնները. իքզինքն կը ըզգացնէր անոնց թէ զիրենք տեսնելու կարօտէն հալած մաշած էր...

Անկար ու Ֆրանսա թող կուտային որ խօսի, բաւականանալով անոր երեսը նայելով իրենց մանկական աչքերով, որոնց մէջ մեծ զարմանք մը կը կարգացուէր: Անկար միշտ ունէր իր լուրջ դէմքը, շրթունքներուն արհամարհոտ ծալքը, արդէն ստորակարգեալներու նկատմամբ անարգութեան և խտրաբարոյ, մանաւանդ չներելով քնա իքզինքն՝ Ժերմէնի մասին ըրած աննպաստ խօսքերը. իսկ Ֆրանսա, աւելի փափկասիրտ, ինքզինքը սրտազգած, գրեթէ յուզուած կը զգար, ու կարծես զատիարակուհիին մէկ թոյլ տուութեանը կը սպասէր՝ որպէսզի զղջացող գերուհիին իրեն տուած համբոյրներուն փոխարէն ինքն ալ համբուրէր զանի:

Ինչ ֆրանսական գործակալութեան սրահներուն մէջ որը ազնուօրէն խնամակալ տիկնանց տրամադրութեան տակ դրուած են Տիկին Գօկորտանի կողմանէ:

—Մահաճառ Ալի արուեստագիտական վարժարանի հանգանակութեան վերջին գումարը կը հասնի 5911 եգիպտական ոսկիի:

—Ամսոյս 25էն սկսեալ հեռագրատունը մը պիտի հաստատուի Տահուրա (Չիքիթա Պարաթ) աշխատութեանց կեդրոնը, արաբերէն և եւրոպական լեզուով հեռագիրներու փոխանակութեան համար:

Հեռագրատունը բաց պիտի ըլլայ առաւօտեան ժամը 8էն մինչև երեկոյեան ժամը 8ը:

—Երէկ իրիկուն «Բիրամիտ» լրագիրը յաւելումով մը կը ծանուցանէ թէ Պ. Պիաճինի կորսուած զաւակը որուն անհետացումը այնքան զբաղեցուց տեղական մամուլը, երէկ ցերեկին գտնուէր է Շարա Մուհամմէտ Ալիի կամարներուն տակ ուր անփութօրէն կը պտտի եղբի:

—Պոլսէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Պալատտի մէջ ժանտախտէն 8 հոգի բռնուել և 4ը մեռել են: Հինգօրեայ քարանձինա հաստատուել է յիշեալ բաղաքի արտածութեանց:

—Հանրօգուտ շինութեանց նախարարութեան խորհրդական Սըր. Վ. Կարսթինի հրաժարական տալու մասին շրջած զրոյցները անհիմն են:

Նաև ճիշտ չ'է Անգլիոյ Էլուարդ Է. թագաւորին թագադրութեան հանդէսին առթիւ Սուտանէն զօրագունքի մը Լանտոն զըրկուելը:

—Ն. Բ. Խաթիւր 4րդ. կարգի Օսմանիէ պատուանշանը շնորհած ըլլալով Պ. Մէյմաբաքի, առջի օրը արարողապետ Հաճան փաշա Ասէմ իր ձեռքով յանձնեց զայն Պ. Մէյմաբաքի, Ապտինի Պալատին մէջ և զինքը շնորհաւորեց իւր վաճառատան մեծ յառաջդիմութեան համար:

—«Լէ Բիրամիտ» լրագիրը կ'իմանայ թէ Եգիպտոսի չիմէնթներու անանուն ընկերութիւնը ամսոյս սկիզբին ի վեր իր Մասսարայի գործարանի բոլոր աշխատութիւնները զարկեցուցեր և իր պաշտօնեաները ճամբու գրեթէ՝ առանց որեւէ փառացու հաստուցում տալու այս վերջիններուն:

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԺՆԱՐՅԵՆ

ԹՈՒՐԲ Կառավարութիւնը ամսոյս 17ին Օսմանեան Պանքային յանձնեց Ռուսիոյ վճարուելիք պատերազմական տուեցանքին

Բայց Ժերմէն այդ արտօնութիւնը չի տուաւ. հերքեց այդ կիներ յափշտակած էր իրմէ... զոնէ կ'ուզէր իրեն պահել այդ տղոցը սէրը զորս բարի ըրած էր, որ զօրցես իր կեանքին մէկ մասը եղած էին, և իրեն համար անհետացած ընտանիքին տեղը կը բռնէին: Որեւէ գործ մը պատրուակ բռնեց, առաւ տարաւ զանոնք իր սենեակը, յուսալով որ անոնց ներկայութիւնը արգելք կ'ըլլար իր սրտին պոռթկալուն:

Երբ Սթա Ապուհա, մայրը թաղելէ վերջը, պալատ վերադարձաւ, Ժերմէն իրեն փոխուած երեցաւ. աղջիկը գունաթափ եւ զած էր. աչքերը մութ գոյն շրջած իր առած էին, նուրբ մէջքը ալ աւելի բարակացած կը թուէր: Սթա Ապուհա իքզինքն վերադարձը իմանալուն պէս, այլա չզարմացաւ. պարզ հոգիներու յատուկ եղող նուրբ

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՐԱՔԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՅԱՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՖՈՆՕԿՐԱՖՆԵՐՈՒ

բաժնեգումարն եղող 350,000 օսմ. ոսկին: Միայն 1,600 ոսկի կը մնայ որ ընդհանուր պիտի վճարուի:

Գալով պատերազմական գերիներուն պահպանման համար պահանջուած գումարէն յետաձեաց 40,000 ոսկին, հակառակ Ռուսիոյ զեականին վերջերս ըրած դիմումին, զեռ վճարուած չ'է:

ԿԱՐԵԻՐ ԱՉԴ

Բաժանորդագրութեանց և ծանուցմանց համար դիմել թերթի մատակարարին առ

ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՄԻՐԱՆԻԱՆ

Թղթատարական Տուփ Թիւ 732

ԳԱՀԻՐԷ

Pour les abonnements et les annonces s'adresser à l'Administrateur du journal:

M. SARKIS MIRANIAN

Boîte postale N° 732

Le Caire

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԹԵՆ ՀԵՌԱԳՐԻ ՓՈՐՁ

Պ. Մարգարի Նիւ-Եորք հասնելով խօսակցութեան մը միջոցին յայտարարեց որ իւր փորձը յաջողած ըլլալուն համոզուած էր ոչ թէ պարզապէս Ամերիկայէն մինչև Անգլիոյ Գորնուայի գաւառը S գիրը պատկերող նշան մը ստացած ըլլալուն, այլ նաև անոր համար որ միեւնոյն գիրը տարբեր ժամանակամիջոցներուն մէջ փոխանցուեցաւ ամեն մէկ վայրէկներէն մինչև 32 անգամ, բան մը որ առաջուրէն համաձայնուած էր:

ԽԱՂԱՎԵՐՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Խաղալիներու արհեստագործութիւնը Գերմանիոյ մի քանի մասերուն մէջ շատ կարեւոր տեղ մը կը բռնէ:

1900 տարւոյն մէջ միակ արտաճութիւնը (վանդի ներքին սպառումը ճշգիւ հաշուել զոտարին պիտի ըլլար) 53 միլիոն 4 հարիւր հազար մարդի կամ թէ 66 միլիոն ֆրանքի դոմարին հասած է, մինչդեռ նախորդ տարուանը 43 միլիոն մարքը չէր անցած:

Յիշեալ խաղալիներէն Գորնուայի նոյն տարւոյն մէջ գնած է 3 միլիոն 4 հարիւր

հազար, Անգլիա՝ 20 միլիոն և Ամերիկա՝ 16 միլիոն մարքի: Այս վերջին երկու երկրներէն են ամենէն մեծ յաճախորդները գերմանական արհեստագործութեան յիշեալ ճիւղին. հակառակ Միացեալ Նահանգաց հաստատած ահազին մարքերուն և երկրին մէջ գերման խաղալիներուն զէմ եղած այն ամբաստանութիւններուն, որպէս թէ թունաւոր գոյներով ներկուած ըլլան:

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ

Ֆրանսական հանրապետութիւնը անցեալ տարի իւր զրոյշման ժամանակ բոլոր տեսակները կերպարանափոխեց:

Ռուսիա Ս. Բեթլերսպոլիի հիմնուելուն երկրորդ հարիւրամեակը կը տօնէ մասնաւոր զրոյշման ժամանակ մէջ տեղ հանելով: Սպանիոյ մէջ նմանապէս նոր զրոյշման թուղթեր պիտի հաստատուին Ալֆոնս Ժ. Թագաւորին յառաջիկայ թագադրութեան առթիւ:

Անգլիոյ մէջ ալ նոր զրոյշման ժամանակ երեւան է տուարտ Է. Թագաւորին պատկերով: Գերմանիա յառաջիկայ ապրիլ 1ին իւր բոլոր զրոյշման ժամանակ նորի պիտի վերածէ Վերմայն Զուիցերիա և Ամերիկայի Միացեալ Նահանգները նորութիւններ պիտի մտցնեն իրենց զինանշաններուն վրայ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՆԾՈՆ, 22 Յուն. — (Երեսփոխանաց Ժողով). — Երեսփոխան Գեէէյի կողմանէ առաջարկուած ուղերձի փոփոխումը 123ի դէմ 333 ձայնով մերժուեցաւ: Կայսերական ազատականները բռնի չը մասնակցեցան:

Պ. Պալմերստը ըսաւ թէ Լորտ Բիշօփի պահանջման վրայ էր որ քաղաքագործը զինուորական կրթութիւն չ'ստացած Աֆրիկէ զրկուեցան: Լորտ Բիշօփը կը խորհի թէ հոն կարելի է զինուորներուն լաւագոյն կրթութիւն մը տալ: 1901 տարուան ընթացքին Հարաւային Աֆրիկէ զրկուած են ընդամենը 240 հազար ձի:

Պերմուտան կղզիները ապախնած Պոլէրներ ազերսագրի մը մէջ կ'ըսեն թէ իրենցմէ 3 հարիւր հոգի պատրաստ են հաւատարմութեան երդում ընելու և մնացեալներն ալ յանձնառու կ'ըլլան չէզոք գիրք մը պահելու: Կը պախարակեն պայքարը շարունակող Պոլիէրները և կը խոստանան, եթէ Հարաւային Աֆրիկէ վերադարձաին, իրենց բո-

լոր աջակցութիւնը նոյնիսկ պատերազմը վերջացնելու համար:

ԼՈՆԾՈՆ, 22 Յուն. — Լորտ Բիշօփը կը ծանուցանէ ինչ Յայտարարութեան մը վրայ հաշտման ժողով տեղի ունեցած էր: Երեսփոխան Լորտ Միշօփը Պալմերստի մէջ Պալմերստի մը զրաւեց 24 գերի առնելով և 9-ի սայլ և 2,000 զուլու արջառ գրաւելով: Զօր. Պրոս Համիլթըն որ Պալմերստի զէմ շարժումներ կը կատարէ, զիշերային հաշտումը մը վերջ 27 Պալմերստի:

ԼՈՆԾՈՆ, 22 Յուն. — Պ. Վալմերսի կողմանէ առաջարկուած և յետոյ ետ առնուած փոփոխումի առաջարկին պատասխանելով, Լորտ Գրանպորն ըսաւ թէ Ասիոյ մէջ մեր նպատակն էր իրաց արդի վիճակին պահպանումը: Որ և է պատճառ չը կայ որ Պարսկաստանի մէջ անգլիական շահերը պաշտպանելու համար փափաքէին: Ռուսիոյ հետ մեր հիմնական տաճած բարեկամական յարաբերութիւններէն տարբեր բանի մը առաջնորդը զմեզ, «սակայն, յարեց, պետք չ'է որ այդ յարաբերութեանց պահպանման ետեւ ըլլանք դաշնագրութիւններով նուիրագործուած մեր իրաւունքները վրայ տալով: Ինչ զոհողութիւն ալ ընել հարկ ըլլայ, իշխանութեան զուլս գտնուող որ և է կառավարութեան անկարելի պիտի ըլլար լքանել Պարսկաստանի և մասնաւորապէս Պարսկային Ծոցի և Պարսկաստանի հարաւարդ մը գտնուած մեր իրաւունքները»:

ԼԻՄԳԵՐԿ, 22 Յուն. — Երեւ հարիւր ուսանողներ ապստամբեցան և փորձեցին 1863ի բոլոնիական ապստամբութեան նման խռովութիւն մը յառաջ բերել:

Շատ մը ձերբակալութիւններ կատարուեցան և սաստիկ մաշտուցութիւն կը տիրէ:

ԲԷՐԼԻՆ, 23 Յուն. — Դեսպանները իրենց յանձնարարութիւնները ներկայացուցին: Սակաւթի զինուորական հետեւողներ ընկերացան իրենց քաղաքին արդիւնք մասին մէջ:

ԼՈՆԾՈՆ, 23 Յուն. — Գոլէյի առաջարկած ուղերձի փոփոխումի համար կայսերական ազատականաց բռնի չը մասնակցելը այնու կը բացարձակ որ Պ. Չէմպլը-էյի ձառէն համառօտի կը հասկցուէր Չէմպլը-էյի ծրագրին ընդունուելը:

Ամեն կարգի լրագիրներ կը զովն Լորտ Գրանպորնի կողմանէ Պ. Վալմերսի եղած պատասխանը և միաբերան կը յայտարարեն թէ Մեծ-Բրիտանիա չը կրնար թոյլ տալ Հնդկաստանի զուլսներուն մօտ օտար նաւային կայանի մը հաստատութիւն: «Թայմըզ» կ'ըսէ թէ այնչափ կենսական շահ

ունեցող երկրի մը մէջ օտար նաւային գործողութեան մը իբր հիմ ծառայելը կայանի մը հաստատումը արտօնել կայսրութեան զէմ գաւառութիւն մը պիտի ըլլար:

ԼՈՆԾՈՆ, 23 Յուն. — (Երեսփոխանաց Ժողով). — Լորտ Գրանպորն կը ծանուցանէ թէ կառավարութիւնը Գերմանիոյ հասկցուց թէ Պալմերստի երկաթուղին ծրագրին աւանդական չ'էր, ձեռնարկութիւն մը որուն մէջ անգլիական զրաւագրութեան հաւանականաբար շատ կը փափաքէին շահ ունենալ: Երկու կառավարութիւնը արդէն մի բեռ վիճարանութեան առարկայ ըրին Պարսից Ծոցին վրայ յիշեալ գծին յանգելը ծայրակէտը: Որ և է վերջնական որոշում չը պիտի տրուի կարծեաց նոր փոխանակութիւն մը տեղի չ'ունեցած:

Պ. Պալմերստը կը ծանուցանէ թէ Պալմերստի բանակներու անուան խօսելու իշխանութիւն ունեցող որ և անձէ մը հաշտութեան բանակցութեան մասին առաջարկութիւն եկած չ'է: Վանդուլէր (Հիւսիսային Ամերիկա) Հոնուու (Հալայի կղզիներուն մայրաքաղաք Ուլիտանիոյ մէջ) մեկնած Գոնտոր Թոմաս, թակիր պատերազմանաւ երկար ժամանակ է ի վեր հոտ չ'է հասած և ի զուր կ'ըսէ պատուի:

ԲԷԹՐՈՒՊՈՒՐԿ, 23 Յուն. — Ռուս մասնաւոր զայրացած է Կոմս Պիլոլի այն մեկնութեան վրայ որով կ'ըսէ թէ Պարսկաստանը այնպիսի երկիր մ'է ուր գերմանական համաշխարհային քաղաքականութիւնը շահեր ունի:

ՀՈՒՄ, 23 Յուն. — Իթօ մարքիդը Նարդի մեկնեցաւ:

ԲԱՐԻՉ, 23 Յուն. — Պ. Տեքսսէի թախանազին ազգաբարութիւններուն վրայ՝ Երեսփոխանաց Ժողովը բուրակեց Արեւելի և Ծայրագոյն Արեւելի միսիսարութիւններուն յատկացեալ զրաւական նպատակները:

ԼՈՆԾՈՆ, 23 Յուն. — Անգլիոյ Պառն 3¹/₂ իշեցուց իր տոկոսի օակը:

ԲԱՐԻՉ, 23 Յուն. — Երեսփոխանական Ժողովը վերահաստատեց եկամտական յանձնարարին կողմանէ շնուած Արեւելի Ֆրանսական վարժարաններուն յատուկ թոշակները:

ՎԻԷՆՆԱ, 24 Յուն. — Էլիզապէթ Արչիդքսուհայն ամուսնութիւնը հանդիսաւոր կերպով կատարուեցաւ:

ԲԱՐԻՉ, 23 Յուն. — Պաշտօնական թերթը կը ծանուցանէ Պ. Ֆիլաթը տը Լոն-շանի վերաբնիչ ատենի անգամ անուանուած ըլլալը:

փափկանատութեամբ, հասկցաւ որ Ժերմէնի տառապանքներուն վրայ իրեն խօսք բանալը ալ աւելի վշտացնել պիտի ըլլար զանի. ուրեմ իր խորհրդածութիւնները իրեն պահեց. լոնց, բայց անգամ մը որ իր միտահոգութիւնը արթնցաւ անոր մասին, երգում ըրաւ որ նախկին սիրականին (Իգլայի) վրայ աշխուրջ հսկողութիւն կատարէ, և պահպան կարգեց ինքզինքը իր բարեկամութիւնը երջանութեան՝ որ իր երջանութեան աւելի յարգի էր իրեն համար:

Իրապալի ամուսնութիւնը զեռ մարդ չէր գիտեր. ըսած էր իր տէրերուն որ կը վախճար թէ այդ տարօրինակ միութիւնը շատերուն կողմանէ հեղեղութեանց և ծաղու առարկայ պիտի ընէր զինքը, և խնդրած էր անոնցմէ որ մէկուն բան չըսեն. իսկ իր խորհուրդը, զոր անոնցմէ կը ծածկէր, այն

էր որ բացարձակապէս հաւատարմ էր որ այդ ամուսնութիւնը պիտի խզուէր նոյն իսկ զայն հրամայող Մուրատի կամքով:

Բան մը սակայն իրեն մտատանջութիւն կը պատճառէր. Ժերմէնը ամբաստանելու հնարքը, թէ ինչ կերպով համոզէր Բրէնսը որ այդչափ անբիծ, վեհ ճակատով, պայծառ նայուածքով այդ էակը ուրիշ բան չ'էր բայց եթէ իրեն անարժան չ'ուսուական դաւաճէր խաբարայ մը:

Գեղատի աղջկան վարմունքին մէջ չկար բան մը որ պարտաւի կարենար ենթադրել. կրնային անբիւղ իր բոլանգակ կեանքը խուզարկել, ուրիշ բան պիտի չի գտնէր բայց պարտաճանաչութիւն և պատուաւորութիւն: Հալու ուրեմն զուր կ'ըլլէր, և այդ ալ կ'արգարանար այն չըմեղանքով որ պէտք էր պոռոյտի տանիլ պղտիկ հա-

նըմները, որ քօղով ծածկուելու տարիքը զեռ չ'ունենալուն, իր հետը կերթային ուր որ երթար. անոնց հաճոյքն էր նպատակ իր բոլոր պոռոյտներուն. միայն եկեղեցի առանձին կ'երթար. բայց այդ մասին ալ, Ֆրանսուս կառապալը, որ կը տանէր զանի, կրնար հաստատել որ, պատարագը լըմնալուն պէս, պալատ կը վերադառնար, առանց իսկ ճամբան կանգ առնելու, մէկուն հետ չ'էր տեսնուեր, տեղ մը չ'էր երթար:

Գահիրէ բնակութեան առաջին օրերը, Ժերմէն եւրոպացի ընկերութեան մէջ քանի մը ծանօթներ ունեցած էր. պալատը հանձնարարութեան հիւր եկած բարձրաստիճան պաշտօնեաներու կամ բարձր գիրքի տէր անձնաւորութեանց տիկիներն իրենց տունը հրաւիրած էին զինքը, հիւրակալած և իրենց բարեկամութեան մէջ մտցուցած էին

զանի, մէկ խօսքով զատարակուհիին ներկատմամբ «ախորժած» ցոյց տուած էին զիրենք, ու անոր սիրտն ալ այս ցոյցերէն զգածուած էր:

Ընդունեցաւ ու գտնուեցաւ քանի մը հրաւերներու, երկու կամ երեք պղտիկ պարահանդէսներու և ճաշերու գնաց, ու իր գեղեցկութիւնը և պատուաւոր անունը քիչ ատենէն մոռցուցին իր ունեցած նուաստ գիրքը. կիներուն հպարտութիւնը վերաօրուեցաւ. վախցան. բաղդատութիւնը անշուշտ իրենց նպատաւոր չ'էր:

Եթէ մայրերը և հարսնացու օրհորդները ծուռ աչքով նայեցան Ժերմէնին, հապախեց ըսնը գեղեցկութիւն չ'ունեցող մանկամարդ կիներուն, պարտութիւններուն համար՝ որոնք բոլորովին անտեղի համարման մը շնորհիւ՝ այդ փոքրիկ շրջանակին թագուհիներն եղած էին...

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՄԵՐՅԱՆ

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎՃԱՌԱՍԵՂԻ ԳԱՀԻՐԷ, — ԱՐԱԳԱՒ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԻՆ ԶԱՊԹԻԹԷԻ ՇԷՆԲԵՆ ԴԷՄ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ֆ

ԱՊՍԶՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՅ ԱՊՍԶՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՅՈՒՆ 1843 թ

ՊԱՆՏՈՒՆ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՒ 563 ՄԻԼԻԱՒ 261 ՀԱՋԱՐ ՖՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դուրսիցներ կը գո ծաղիք։ Խառն աստիճանագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱԼ ԼԱՅՖԻ սակագինը և ապահովագրութեան դանական դրոշմները չառաջարկած մի՛ ապահովագրութիւն — Առատաձեռն պայմաններ
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ Պ. Ն. ԳԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԵ, Ընդհ. ներկայացուցիչք։
Սղեբանդերիւս Սնթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալաւոր։ Գ. ԵԿԱՒԻՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆՍՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԿԱՆ 200,000,000 ՖՐԱՆԲ

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ 3 ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ-ԳԱԶԻՐԷ ԲՈՒՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ և եղանակաւոր գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ։

Ժգլն/յայիկ հաշիւներ կը բանայ արքայաւոր աւանդներու վրայ։

Ֆրանսայի և օտար երկրներու վրայ կ'աւանդէ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր։

Կը դանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ բաշտած փոխանակագրեր։

Աւանդ. ձգուած դրամներուն փոխարէն կ'անխորշ պայմանաւաճակ մուհակներ կուտայ։

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՇ

ԵԱՏԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շրջաշրջի օր ժամ 4ին (յ. մ.) դէպի Բիւրէ, Իզմիր, Միտիլի և Կ. Պոլիս։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միևնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղքաւորիկա ամեն շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին։

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւները Բիւրէ հանգիպելուն, Աթէնք այցելել։

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՇ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոս-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէստէրուն։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միևնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղքաւորիկա ամեն շաբաթ օր, առաւօտեան ժամը 6ին։
Ճամբորդները օրը անգամ մը կ'երթնեն Կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՑՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանց համար դիմել Ընկերութեան Աղքաւորիկայի, Բոս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրի ամեն մամնահիւղերուն։

1--1902

ՅԱՆՁՆԱԿԱՆ-ԴՈՐԾԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԱԿԱՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և շրջականերէն կ'ընդունուին՝ Պոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդրոններ զտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրկի, Պրանշուիկի վիճակահանութեանց տոմսակներու, Եգիպտական Քրէտի Զօնսիէի, Բումէլիի երկաթուղոյ բրամբներու, և դարձեալ ամսավճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային։

Արժեթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ առաջադրութիւնները ընդունուին կանխիկ փողով միջոցաւ։ Գիրքերու համար կ'աւանդէ նախապէս կէսը զրկել և քսանորդը «գոնթո ռամպուրման» վճարել այն պահուն, երբ յանձնարարութեանցը զրկուին իրենց հասցէներուն։

Մինչև 20 ղըշ. արժէքով յանձնարարութիւններու համար Եգիպտ. Յ. միլիոնոց դրոշմաթուղթեր կ'ընդունուին։

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի ևայլն ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանին։

Հասցէ՝

Garabed Erzenegatsian
Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԵՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ, ԳԱՀԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, կանանց և տղայոց հասար։

Չափի վրայ զգեստներ, յաւազոյն պայմաններով։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՄԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւերով

ԱՆԲԸՐԷՐՈՐ ՆԻՔՕԼԱ. տրղթ. թօն. 5500	2ԻՄԱՋՅ տարողութիւն թօն. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ " " 5500	2ԱՐ " " 5500

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղքաւորիկայէն դէպ ի ԲՕՌ ՍԱՅԻՏ, ԵԱՅԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ։

ԳԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ
Աղեքաւորիկա, Թոքասաւն փողոց։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատուալ Խաղիկան Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմեր.

Ընդ. կեդրոն ի Գահիրէ. Մամնահիւղեր.

Աղքաւորիկա, Մանսուրա, Խալէթում.

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ։

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ բաշտած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՓՈՒՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, արտի խառնուրդ, լուծմունք, այնդուրիւն և փոխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ա են ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն աղքուղեղէն մէյմէկ թիչ առնել։

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աղքուղիւն դերու նման չի խանգարեր ստամբուլը։

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ։

45—316